

896.71

44 - 80

գրադարան

14042

1-

90'



155-96 / 22P3-99

79 NOV 2010

арм
6189
55
1. в. 8010803

891.71

ун-80

ԱՍՏՐԻՑ

ԱՍՏՐԴՐՈՅ,

ԹԱԳՎԱՐԾ

Թարգմ. Խ. Յավելիկեանի

Գույք է դպրոցի

Ա. Խ. Տառտ

ԱՍՏՐԻՅ ԱՐԵ ԱՍՏՐԻՅ ԱՆԴՈՆ
ՊԵ. Խ. ՅԱՆՈՎ

ТИПОГРАФІЯ
С. Т. ШАХБАГОВА
ДАКУ
1912

23.08.2013



ԱՍՈՐԾՅԱ ԱՄԱՐԴՅՈՒՆ ԹԵՂԱԿՈՐԸ

Ասորաց Ասարհագօն թագաւորը նւա-
ճելով Լաիլիէ թագաւորի երկիրներին
կործանեց և այրեց բոլոր քաղաքները,
բնակիչներին քշեց իւր երկիրը և Լաի-
լիէին գերի բռնելով բանդարկեց երկաթէ
վանդակի մէջ:

Գիշեր էր, Ասարհագօնը իւր զքեղ
անկողնում պակառծ նիրհում էր և մտա-
ծում, թէ ի՞նչ պատիժ տայ Լաի-
լիէին, երբ յանկարծ լսեց իրենից մօ-
տիկ մի խշխշոց, և աչքերը բանալով
տեսնում է իւր մօտ կանգնած ձիւնի
նման ձերմակ մորուքով և հեղ աչքերով
մի ծերունու:

— Դու կամենում ես պատժել Քմի-
լիէին, հարցը ծերունին.

—4—

—Այս,—պատասխանեց թագաւորը.
 —բայց ես դեռ չեմ որոշել, թէ ի՞նչ
 պատիժ տամ նորան:
 —Բայց չէ՞ որ այդ Լաիլէն դու ես,
 —ասաց ծերունին:
 —Այդ ճշմարիտ չէ,—ասաց թագաւ-
 որը,—ես—ես եմ, Լաիլիէն Լաիլիէն է:
 —Դու և Լաիլիէն միհնոյն մարդն էք,
 ասաց ծերունին,—այդ միայն քեզ է
 այդպէս թւում, որ դու Լաիլիէն չես,—
 բայց դու Լաիլիէն ես:
 —Ինչպէս տեսնում ես,—ասաց թա-
 գաւորը. ես ահա պառկած եմ վա-
 փուկ անկողնում շրջապատւած ստրուկ-
 ներով և ստրկուհիներով. իսկ վաղը ես
 նորից կակսեմ զւարձանալ իմ բարե-
 կամներիս հետ, ինչպէս այսօր:—Լաիլ-
 իէն ինչպէս թռչուն նստած է վան-
 դակում, և վաղը նա նստած կինի ձողի
 վրայ և այնքան կտանջին, մինչև որ մեռ-

նի, և ապա դիակը կշպրտեն շներին
 լավիելու:

—Դու չես կարող ոչնչացնել նորա
 կեանքը.—ասաց ծերունին:

—Բայց միթէ ես չէի որ 14000
 զօրականների կեանքերը ոչնչացրի և
 նրանց դիակներից բլուրներ կանգնե-
 ցրի,—ասաց թագաւորը.—ես կենդա-
 նի եմ, իսկ նրանք չկան. ուրեմն ես
 կարող եմ ոչնչացնել կեանքը:

—Ո՞րտեղից գիտես, որ նրանք չ'կան:

—Որովհետեւ չեմ տեսնում նրանց:
 Եւ ամենազլիսաւորը, որ նրանք տան-
 ջւեցին, իսկ ես ոչ, նրանց համար վատ
 էր, իսկ ինձ համար լաւ:

—Այդ միայն քեզ է այդպէս թւում,
 բայց իսկապէս դու ինքդ քեզ տան-
 ջւեցիր և ոչ թէ նրանց:

—Ես քեզ չեմ հասկանում,—ասաց
 թագաւորը:

— Կամենւոմ ես հասկանալ:

— Այս:

— Հետիր ինձ,—ասաց ծերունին ցոյց տալով թագաւորին ջրի աւազանը: Թագաւորը բարձրացաւ տեղից և մօտեցաւ աւազանին:

— Հանւիր և մտիր աւազանի մէջ:

Ասարհագօնը արեց այս, ինչ որ հրամայեց նորան ծերունին:

— Այժմ, հէնց այս որ սկսեմ գաւաթի ջուրը քո գլխին լցնել,—ասաց ծերունին և գաւաթը ջրով լցրեց,—գլուխդ սուզիր ջրի մէջ:

Ծերունին գաւաթի ջուրը սկսեց լցնել նորա գլխին և նա սուզւեց:

Ասարհագօնը սուզւելուն պէս զգաց, որ ինքը այլևս Ասարհագօն չէ, այլ մի ուրիշ մարդ. նա տեսնում էր, որ ինքը պառկած է շքեղ անկողնում մի գեղե-

ցիկ կնոջ հետ: Նա երբէք չէր տեսել այդ կնոջը, բայց գիտէր, որ դա իւր կինն էր: Ահա նորա կինը վերկենալով կանչում է նորան. „Իմ թանկագին ամուսին Լաիլիէ, դու յոգնել էիր նախընթաց օրւայ աշխատանքից, դորա համար էլ այսօր սովորականից շատ քնեցիր, ես չ'արթնացը քեզ, որպէսզի չ'խանգարեմ քո հանգիստը: Բայց այժմ իշխանները պալատում քեզ են սպասում. հագնւիր և դուրս եկ նրանց մօտ”:

Եւ Ասարհագօնը հասկանալով, որ ինքը Լաիլիէն է, շատ է զարմանում որ ինքը մինչև այժմ չէ իմացել: Նա վէր կենալով հագնւում է և գնում պալատ, ուր սպասում են նորան իշխանները:

Իշխանները ծնկաչոք ողջունում են թագաւորին և ապա նրա հրամանով նստում են թագաւորի դիմաց: Իշխան-

ներից մէկը պատմում է թագաւորին,
որ Ասարհաղօնի հասցրած վիրաւորանք-
ները այլնս անկարելի է տանել և որ
պետք է կռւի երնել նորա դէմ: Բայց
Լախիլէն չէ համաձայնուում, այլ վճռում
է պատգամաւորներ ուղարկել Ասար-
հաղօնի մօտ: Եւ Լախիլէն ընտրելով
պատգամաւորներ ուղարկում է Ասար-
հաղօնի մօտ:

Վերջացնելով գործը, Ասարհաղօնը,
որ այժմ Լախիլէն էր արձակեց իշխան-
ներին, և ինքը դուրս եկաւ լեռները
որսի: Որոը յաջող էր: Նա սպանում
է երկու վայրենի աւանակների: Վերա-
գառնալով պալատ մեծ ինջոյք է պա-
տրաստում և իւր բարեկամների հետ
գւարճանում դիտելով ստրկուհիների
պարերին:

Հետեւալ առաւօտեան դուրս է գա-
լիս պալատի սրահը, որտեղ սպասում են

նորան խնդրասուներ, մեղադրեալներ
և զանգատառուներ: Եւ նա վճռում է
բոլորի գործերը, և նորից գնում իւր
սիրած գւարճութեանը, որսի: Այդ
օրն էլ նրան յաջողուում է, սպանել էզ
առիւծին: Որսից յետոյ նա կրկին սկը-
սում է գւարճանալ: Իսկ գիշեր-
ները անց էր կացնում իւր սիրելի
կող հետ:

Այսպէս ապրում էր նա օրեր և շա-
բաթներ, սպասելով իւր ուղարկած
պատգամաւորների վերադարձին Ասար-
հաղօն թագաւորի մօտից, որ մի ժա-
մանակ ինքն էր:

Պատգամաւորները վերադառնում են
մի ամսից յետոյ քթերը և ականջները
կտրւած:

Ասարհաղօնը պատգամաւորներին
հրամայել է ասել Լախիլէն, որ նանորս
հետ էլ այնպէս կ'վարւի, ինչպէս վարւեց

նրա պատգամաւորների հետ, եթէ իսկոյն չուղարկի նշանակած հարկը և չ'զնայ անձամբ խոնարհւելու նորան:

Լաիլիէն, որ նախկին Ասարհադօնն էր, նորից խորհուրդի է հրաւիրում իշխաններին, թէ ի՞նչ միջոցով առնել չարիքի առաջը: Բոլոր իշխանները միաձայն որոշում են անմիջապէս կուի ենել Ասարհադօնի դէմ, քանի դեռ նախահարձակում չէ դործել Ասարհադօնը... Թագաւորը համաձայնութեամբ է և իւր զօրքի գլուխն անցնելով արշաւում է դէպի կուի դաշտ: Եօթն օր շարունակում է արշաւանքը: Ամեն օր թագաւորը անցնում է իւր զօրքի միջով, խրախուսում է նրանց և ոգի ներշնչում: Ութերորդ օրը նրա զօրքերը մի գետափում լայնատարած հովիտի մէջ հանդիպում է Ասարհադօնի զօրքերին: Լաիլիէի զօրքերը կուում էին

հերոսաբար, բայց Լաիլիէն, որ նախկին Աօպրհադօնն էր, տեսնում է, որ թշնամու զօրքերը մըջիւնի նման իջնում են լեռներից, ծովի նման հեղեղում հովիտը և յաղթում իւր զօրքերին: Տեսնելով այդ լաիլիէն կատաղած մտնում է թշնամու խիտ շարքերը և սկսում է աջ ու ձախ հարւածել թշնամուն: Լաիլիէի փոքրաթիւ զօրքը ոչնչանում է Ասարհադօնի անթիւ զօրքերի առաջ: Լաիլիէն զգում է, որ ինքը վիրաւորւած է և որ իրեն գերի են տանում:

Ինն օր շարունակ նա շղթայակապ ձանապարհ էր գնում Ասարհադօնի զինւորների ուղեկցութեամբ: Տասներորդ օրը նրանք հասան Նէնէլիւ քաղաքը և լաիլիէին բանդարկեցին վանդակում: Լաիլիէն չէր տանջւում այնքան վէրքից և քացղից, որքան ամօթից և կա-

տաղութիւնից: Նա զգում էր, որ ինքը
անզօր է վարձատրել թշնամուն նրա
հասցրած բոլոր չարիքների համար:
Միակը, ինչ որ նա կարող էր անել, այդ
այն էր, որ իւր, տանջանքներով
գւարճութիւն չպատճառի թշնամուն:
Եւ նա վճռեց հերոսաբար տանել բո-
լորը: Քսան օր է ահա որ նա նոտածէ
վանդակում և սպասում է իւր դա-
տավճռին:

Նա տեսնում է, թէ ինչպէս իւր աղ-
գականներին և բարեկամներին տանում
են պատժատեղին և տանջում: Նա լսում
է նրանց հառաջանքի ձայները, որոնց
տանջում էին: Նա այդ բոլորը տես-
նում էր և լսում: Ահա նա տեսնում է,
թէ ինչպէս իւր կնոջը շղթայակապ
տանում են Ասարհադոնի պալատը իբրև
ստրկուհի: Եւ նա այդ հարւածն էլ է
տանում:

Բայց ահա երկու դահիճներ բացում
են նորա վանդակի դուռը, դուրս են
բերում նորան, ձեռքերը կաշկանդում
և տանում մահապատժի տեղը, որ ար-
իւնով է ողողւած: Նա տեսնում է սուր
արիւնոտ ձողը, որի վրայից հէնց նոր
իջեցրին իւր բարեկամներից մէկի դիակը
և գուշակնում է, որ ձողը իւր համար
են պատրաստում:

Նորա վրայից հանումեն հազուսալը:
Լախիէն սարսափում է երբ տեսնում է
իւր նիհար մարմինը որ մի ժամանակ
այնպէս առողջ էր: Բայց ահա դահիճ-
ները բարձրացնում են նորան ձողի
վրայ իջեցնելու:

„Այս վայրկեանիս մահ և ոչնչութիւն“
անցաւ նրա մտքով և ամեն բան մո-
ռանալով սկսեց աղջչել իւր դահիճ-
ներին, որ ինայեն իւր կեանքը: Բայց

ոչոք չէ լսում նրան:

Բայց այս չի կարող պատահել, —
մտածում էր նա, — և քնած եմ: Սա
երազ է: Եւ նա ոյժ է գործ դնում, որ
արթնանայ: — Բայց չէ որ ես Լաիլիէն
չէմ, ես Ասարհաղօնն եմ:

— Դու թէ մէկն ես և թէ միւսը,
— լսում է նա ինչ որ մի ձայն և զգում
է որ ահա մահապատիժը իրագործում
են: Նա ճշում է և գլուխը աւազանից
դուրս հանում: Իսկ ծերունին թափում
է գաւաթի ջրի վերջին կաթիները:

— Օ՛, որքան սոսկալի էր, որքան
տանջւեցի ես, և ինչպէս երկար:

— Ինչպէս երկար... բայց դու ըն-
դամենը մի վայրկեան սուզւեցիր և
իսկոյն գլուխտ հանեցիր: Տէս, գաւաթի
ջուրը դեռ բոլորը չէ թափւել: Արդեօք
հասկացար դու այժմ...


Ասարհաղօնը ոչինչ չասաց և սար-
սափած նոյում էր ծերունուն.

— Արդեօք հասկացար, — շարունակեց
ծերունին, — որ Լաիլիէն — այդ դու ես,
և այն զօրականները, որոնց դու կոտո-
րեցիր, դարձեալ ինքդ ես: Եւ ոչ թէ
միայն զօրականները, այլ և այն գա-
զանները որոնց դու սպանում էիր
— դարձեալ դու էիր, դու մտածում ես
որ կեանքը միայն քեզանում է, իսկ
ես յետ քաշեցի այդ քօղը և դու տե-
սար, որ ինչ չարիք ձը գործում ես,
ինքդ քեզ ես գործում: Դու քո մէջ
պարունակում ես միմիայն կեանքի մի
մասնիկը. և դու այդ կեանքի մի մաս-
նիկը կարող ես լաւացնել կամ վատա-
ցնել: Բարոքել կեանքը քո մէջ դու
կարող ես միայն մի պայմանով, այն է՝
սիրես ուրիշի անձըինչպէս քոնը: Իսկ
ոչնչացնել կեանքը այդ քո իրաւունքի
տակ չէ: Քո սպանած արարածների

200

կեանքերը կորել են քո աչքից, բայց
չեն ոչնչացել: Դու մտածեցիր երկարա-
ցնել քո կեանքը ոչնչացնելով ուրիշնը:
Բայց դու այդ չես կարող: Կեանքը
հաւիտենական է և անմահ: Կեանքը
ոչնչացնել չէ կարելի, որովհետև նա
է որ կայ: Իսկ մնացածը մեզ միայն
թւում է...

Այս ասելով ծերունին չքացաւ...
Հետեւալ օրը Ասարհազօնը ճրամայեց
արձակել Լախլիէին և գերիներին: և
դադարացնել մահապատիժները:
Իսկ երբորդ օրը նա կանչեց իւր
որդի Աշուըրանիպալին և յանձնելով
իւր գահը նորան ինքը նախ անապատ
քաշւեց լաւ խորհելու այն բոլորը, ի՞նչ
որ իմացաւ. ապագ որանից յետոյ սկսեց
աջել և մարդկանց քարոզել, «որ ամեն-
ու կեանքո մէկ է, և եթէ մէկը չարիք
է գործում ուրիշն, ու ու անդում է չ
ինքը իրենց»:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ԱՐԴՅՈՒՆՎԱՐԱԳՐԱԿԱՆ ԲՈՅՈՅԱՏԵՐԱՆ

1922



ՀՀ Ազգային գրադարան



NL0329156

14.042

